



## Լեզվական հասանելիության քարտ

Այն մարդիկ, ովքեր վատ են տիրապետում անգլերեն լեզվին, իրավունք ունեն ստանալու բանավոր թարգմանչի անվճար օգնություն իրենց մայրենի լեզվով: Այս քարտը ծառայությունների մատակարարներին կօգնի որոշել տվյալ անձի լեզուն՝ նախքան օգնության համար բանավոր թարգմանիչ կանչելը: Այս իրավունքը սահմանված է Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի Բաժին VI-ում:

Այս քարտն օգտագործեք հետևյալ դեպքերում՝



Շտապ և ոչ շտապ բուժօգնության ծառայությունների դեպքում



Բժիշկների այցելելիս, հիվանդանոցներում և դեղատներում



Պետական աջակցության ծրագրերում



Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններում



Դատարաններում (քաղաքային, վարչաշրջանային, նահանգային և դաշնային)



Հասարակական տրանսպորտում



Հանրային դպրոցներում և համալսարաններում



Հանրային ծառայություններում (ջուր, աղբ, էլեկտրականություն)

### Հրահանգներ

Կտրեք ստորև բերված քարտը կամ այն Ձեր հեռախոսով լուսանկարեք: Քարտը միշտ Ձեզ մոտ պահեք: Օգտագործեք այն՝ խնդրելու օգնություն Ձեր մայրենի լեզվով: Այս քարտը չի պահանջվում ծառայություններ ստանալու համար:



#### I speak Armenian.

Please contact an interpreter so we can communicate. People who do not speak English well have a right under Title VI of the Civil Rights Act to free interpretation help in their language.



#### Ես խոսում եմ հայերեն.

Խնդրում ենք կապվել բանավոր թարգմանչի հետ, որպեսզի մենք կարողանանք շփվել: Այն մարդիկ, ովքեր վատ են տիրապետում անգլերեն լեզվին, իրավունք ունեն Քաղաքացիական իրավունքների մասին օրենքի Բաժին VI-ի ներքո ստանալու բանավոր թարգմանչի անվճար օգնություն իրենց մայրենի լեզվով:

